ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

REPUBLIK OF ARMENIA
ARMAVIR MARZ
MIASNIKYAN MUNICIPALITY

Արմավիրի մարզ գ. Մյասնիկյան
Փող. Մյասնիկյան
Հեռ. (0233) 74-6-73

Armavir marz Miasnikyan village
Str. Miasnikyan
Tel. (0233) 74-6-73

02.դեկտեմբերի2013թ
Թիվ 078

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ ենք ուղարկում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի ղեկավարի 2013թվականի հոկտեմբեր, նոյեմբեր ամիս ընդունած որոշումները և արձակած կարգադրությունները:

Առդիր «5»թերթ.

Համայնքի ղեկավար՝ Ա.Պետրոսյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 12068-13
12 12 2013 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ N 23-Ա

<<31>> հոկտեմբեր 2013թվական

<<ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՓԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ>>

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի առաջին մասով և 32-րդ հոդվածի 17-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Ջեռուցման սեզոնը սկսվելու պատճառով 2013 թվականի նոյեմբերի 1-ից դադարեցնել Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի մանկապարտեզի աշխատանքային գործունեությունը և այն հայտարարել փակված:
2.Մանկապարտեզում որպես պատասխանատու թողնել տնօրենին, հաշվապահին և պահակներին:
3.Հանձնարարել մանկապարտեզի տնօրենին՝(Ռ.Մանուկյանին) իրականացնել սույն որոշումից բխող իրավական գործառույթները:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ա.Պետրոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

ՈՐՈՇՈՒՄ N 24-Ա
„20„ նոյեմբերի 2013 թվականի

ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ
ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006թ-ի օգոստոսի 29-ի «Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման օրինակելի աշխատակարգերը հաստատելու մասին» N 12-Ն հրամանի N1 և N2 հավելվածների 8-րդ կետը, *որոշում եմ.*

1.2013թ-ի դեկտեմբերի 20-ին ժամը 12:00 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի գյուղապետարանում անցկացնել աշխատակազմի համայնքային ծառայողներ՝ աշխատակազմի քարտուղար (ծածկագիր 1.2-1) Անուշիկ Խաչատրյանի, գլխավոր մասնագետ (ծածկագիր 2.3-1) Լաուրա Սմբատյանի, առաջատար մասնագետ (ծածկագիր 3.1-2) Տաթևիկ Այվազյանի, առաջատար մասնագետ (ծածկագիր 3.1-4) Ստյոպիկ Արտաշյանի հերթական ատեստավորումը:

2.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան գյուղական համայնքի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի նիստերի տեխնիկական սպասարկման համար լիազորված անձ նշանակել գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ (ծածկագիր 3.1-1) Անահիտ Գաբրիելյանին:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Ա.Պետրոսյան

2013թվականի նոյեմբերի 20
գ.Մյասնիկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

ՈՐՈՇՈՒՄ N 25-Ա
„26„ նոյեմբերի 2013 թվականի

«ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին 6-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով, և հիմք ընդունելով Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի ավագանու 2013թ-ի նոյեմբերի 25-ի N 35-Ա որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Ստեղծել «Մյասնիկյանի երաժշտական դպրոց» արտադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը:
2. Հաստատել «Մյասնիկյանի երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը և օրենքով սահմանված կարգով այն ներկայացնել պետական գրանցման:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Ա.Պետրոսյան

2013թվականի նոյեմբերի 26
գ.Մյասնիկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ
«04» նոյեմբերի 2013 թ N 21-Ա

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի 1-ին կետով, *կարգադրում եմ՝*

1. 2013թնոյեմբերի 4-ից մինչև նոյեմբերի 6-ը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի գյուղապետարանի աշխատակիցներ՝ Ա.Խաչատրյանին, Լ.Սմբատյանին և Թ.Ղազարյանին գործուղել քաղաք Երևան, Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն՝ ուսուցման դասընթացների:

2.Հանձնարարել գլխավոր մասնագետին(Լ.Սմբատյանին)հաշվակել և վճարել գործուղման ծախսերը՝ համաձայն գործող օրենքի:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար Ա.Պետրոսյան

«04» նոյեմբեր 2013թվական
գ. Մյասնիկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ
«14» նոյեմբերի 2013 թ N 22-Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության «Անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին» 2005թվականի հուլիսի 9-ի N 947-Ն որոշումը, *կարգադրում եմ՝*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքում զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների (ազատամարտիկների) ընտանիքների բնակարանային պայմանները ուսումնասիրելու և ստուգելու նպատակով, ստեղծել բնակարանային հարցերի հանձնաժողով հետևյալ կազմով՝

- հանձնաժողովի նախագահ- Ա.Պետրոսյան (համայնքի ղեկավար)
- հանձնաժողովի անդամ - Ս.Արտաշյան (առաջատար մասնագետ)
- հանձնաժողովի անդամ - Վ.Հովհաննիսյան (ավագանու անդամ)
- հանձնաժողովի անդամ - Ա.Երիցյան (ավագանու անդամ)

2.Հանձնժողովին՝ ուսումնասիրել և ստուգել համայնքի զոհված և հաշմանդամ դարձած զինծառայողների բնակարանային պայմանները և արդյունքների մասին գրավոր հայտնել 3-օրյա ժամկետում:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ա.Պետրոսյան

«14» նոյեմբեր 2013թվական
գ. Մյասնիկյան